


Բանագական գրադարան № 2.

ԱՐԴ ԿԱՌԻՑԿԻ ԵՏՏՐԱԾ ԳՈՅՐԱՆ ՅՈՒՆԱՆԱԿԱՆ  
ՄԱՍՆԱԿԱՐԱՆ  
ԲԻ 168

CONT

Փարված: 7 Mars 918  
8 NOEM 1939  
ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ

ԴՐԱ  
92



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

H. KILIDJIAN  
LIBRAIRE-ÉDITEUR  
CONSTANTINOPLE

Թարգմ. Ա. Դաշտոյեանի

Հրատարակութիւն «Կայծ»-ի

1906

ՅՈՒՆԱԿԱՆԱՑ ԳՐԱԴԱՐԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ա. Վարդանեանի, Գանովսկ. թ 3.

1906

CONTROLE 168

ՊՈՐԴՎԱԾ 7Մարտ 180  
ՊԵՏՈՎԵՆ ԴՈՒՄԸ 6

1789 թ. ապրիլի 27-ին նշանակւած էր,  
իսկ մայիսի սկզբներում կայացաւ աղգային  
ժողովի բացումը Ֆրանսիայում:

Այդ օրը սովորաբար ընդունւած է հա-  
մարել ֆրանսիական յեղափոխութեան ա-  
ռաջին օրը: Բայց հազիւ թէ գտնւի մէկը,  
որ սկսի պնդել, թէ ռուսական Դումայի  
բացման օրը՝ ապրիլի 27-ը նշանակում է  
Ռուսաստանի յեղափոխութեան սկիզբը:  
Ընդհակառակը, շատերը սպասում են, յոյս  
տածում կամ երկիւղ են կրում, որ այդ օրը  
նշանակում է յեղափոխութեան վերջը: Իս-  
կապէս այդ օրը մի էպիզօդ է յեղափոխու-  
թեան ընթացքում, բայց էպիզօդ, որը ի-  
րանով վերջ է դնում յեղափոխութեան մի  
կարևոր շրջանի և ամենայն հաւանակա-  
նութեամբ սկսում է նրա մի նոր, աւելի  
կարևոր շրջանը:

Լիովին հասկանալի է, որ հոկտեմբերեան  
շաբաթման փառաւոր ընթացքից յետոյ, յե-

զափոխականները և մանաւանդ սօցիալիստ-  
 ների մեծամասնութիւնը Վիտտէ-Դուրնո-  
 վոյի Դումայի վրայ նայում էին որպէս  
 հին` Բուլիգինեան Դումայի վրայ. նրանք  
 այդ ոչ թէ զիջում էին համարում, այլ  
 ծաղր. նրանք այդ Դումայի մէջ նկատում  
 էին ոչ թէ յեղափոխութեան յաջողութիւնը,  
 այլ շնդհակառակը՝ ոստիկանական-կօզա-  
 կային ըէժիմը ուժեղացնելու մի միջոց:  
 Հիմնագիր Ժողովի փոխարէն, որը Ռուսաս-  
 տանին կը տար պետական նոր սահմանա-  
 դրական կազմ, նրան տւին մի պարլամենտ  
 աւելի պակաս իրաւունքներով, քան ունեն  
 նոյնիսկ Գերմանիայի և Աւստրիայի դեկո-  
 րատիւ պարլամենտները, պարլամենտ—  
 ընտրւած ամենաբարդ ու ամենախճճւած  
 ընտրողական սիստեմով, որը վերին աստի-  
 ճանի օգտակար է խոշոր սեփականատէրերի  
 համար, որովհետև նրանց ձեռքը տալիս է  
 ընտրողների վրայ ճնշում գործ դնելու,  
 նրանց վախեցնելու բազմաթիւ հնարաւո-  
 րութիւններ—և այն էլ զինւորական դրու-  
 թիւնների ժամանակ, երբ բացակայում է  
 միութիւնների, ժողովների ու մամուլի գո-  
 նէ որևէ է ազատութիւն, երբ բանտարկւած  
 էին պրօլետարիատի ազատութեան համար  
 քիչ թէ շատ ակտիւ կոիւ մզող համարեա  
 բոլոր ոյժերը: Այսպիսի պայմաններում  
 զարմանալու ոչինչ չկայ, որ Ռուսաստանցի

մեր ընկերների մեծամասնութիւնը այդ  
ճանապարհով կանչւած Դուման՝ համարում  
էր ժողովրդական ներկայացուցչութեան մի  
քստմնելի կեղծիք և վճռել էր բօյկօտի են-  
թարկել նրան, չմասնակցել ընտրութիւն-  
ներին, որպէսզի ժողովրդի հետաքրքրու-  
թիւնը չզարթնեցնէ դէպի մի այնպիսի  
հիմնարկութիւն, որի վերացումը միայն  
հանդիսանում է յեղափոխութեան յաջողու-  
թեան և նրա յաղթութեան անխուսափելի  
պայմաննը:

Եւ իսկապէս, եթէ ի նկատ առնենք այն  
հանգամանքը, թէ որքան ըէակցիօն է  
պարլամենտական մեծամասնութիւնը, նոյն  
իսկ մի այնպիսի արդիւնաբերական զար-  
գացման բարձր աստիճանի վրայ կանգնած  
երկրում, որպիսին է Գերմանիան, որը ու-  
նի ընդհանուր ընտրողական իրաւունք, և  
թէ ինչպէս այդ մեծամասնութիւնը միշտ  
պատրաստ է ծառայելու կառավարութեանը,  
այն ժամանակ արդեօք իրաւացի չի լինի  
այն երկիւղը, թէ Պետական Դուման ցարի  
կառավարութեան ձեռքում կը դառնայ մի  
կամակատար գործիք, ըէակցիայի պատըս-  
պարան, որ նա կը լինի ոչ թէ ոռւս ժողո-  
վրդի, այլ խուլիգնների ներկայացուցչու-  
թիւն և կօնտր-յեղափոխութեան նեցուկը:

Գերմանական պրոլետարիատի շրջաննե-  
րում, որոշ ժամանակից սկսած, մեծ ան-

հանգստութեամբ է քննում Բայխստագի  
 ընտրողակտն իրաւունքի սահմանափակւե-  
 լու հնարաւորութիւնը և հիւսիսային գեր-  
 մանական դաշնակից մի քանի պետութիւն-  
 ների լանդտագների համար գոյութիւն ու-  
 նեցող ընտրողական դասակարգային սիս-  
 տեմի վերացման անհրաժեշտութիւնը: Եւ  
 ընտրողական այդ դասակարգային սիստեմը  
 այնպէս ուժեղ է զգացւում, ընտրողական  
 իրաւունքի ամեն մի սահմանափակում այն  
 աստիճանի վտանգաւոր էնկատւում, որ ընտ-  
 րողական իրաւունքի համար մղւող կռւում  
 լնդունելի է համարւում նոյնիսկ մի այնպի-  
 սի ուժեղ, ներգործող միջոց, որպիսին է  
 ընդհանուր մասսայական գործադուլը, հենց  
 որ իրերի դրութիւնը հնարաւորութիւն  
 տայ այդ միջոցը գործադրելու: Բայց ընտ-  
 րողական իրաւունքի նոյնիսկ ամենավատ  
 սահմանափակրւմը, որպիսին միայն հնաւ-  
 րաւոր կը լինէր Գերմանիայում, չէր կա-  
 րող ստեղծել մի այնպիսի ողորմելի ընտ-  
 րողական իրաւունք, որպիսին տալիս է  
 Պետական Դումայի ընտրողական օրէնքը,  
 որի համեմատութեամբ նոյնիսկ Սաքսոնիա-  
 յի ու Պրուսիայի լանդտագների ընտրողա-  
 կան եռաստիճան սիստեմը դէմօկրատական  
 են թւում: Եւ այսքանից յետոյ զարմանա-  
 լու ոչինչ չկայ, որ մեր Ռուսաստանցի ըն-  
 կերների միծամասնութիւնը ընտրողական

պայքարի մէջ մտնելու և ապա Դումա գը-  
նալու փոխարէն աւելի նպատակայարմար  
համարեց կաւել այդ Դուման քսնդելու նը-  
պատակով և ձեռք բերելու Հիմնադիր Ժո-  
ղով, ընարւած ընդհանուր, հաւասար, ուղ-  
ղակի և գաղտնի քւէարկութեամբ, միու  
թիւնների, ժողովների ու մամուլի կատա-  
րեալ աղատ պայմաններում:

Որքան այդ Դուման թշնամութեամբ ըն-  
դունւեց սօցիալիստների մեծամասնութեան  
կրղմից, նոյնքան նա վառ յոյսեր զարթեց-  
րեց լիբերալների մէջ։ Ռուսաստանում,  
արևմտեան Եւրոպայի հակառակ, լիբերալ-  
ները կազմում են—չհաշւելով քաղաքի  
ինտելիգենցիային—գլխաւորապէս խոշոր  
հողատէրերը։ Սրանք Ռուսաստանի բոլոր  
ունեոր դասակարգերից ամենից շատ են  
տուժում գոլութիւն ունեցող ըէժիմից, որը  
քայքայում է գիւղատնտեսութիւնը և միեւ-  
նոյն ժամանակ, կամ կողմնակի կերպով ի  
հաշեւ և ի վնասնրա (գիւղատնտեսութեան),  
զանազան արտօնութիւններ է տալիս կա-  
պիտալիստների դասակարգին։ Այս պատ-  
ճառով խոշոր հողատէրերը ամենից շատ են  
շահագրգռւած բիւրօկրատական-բացարձակ  
բեժիմը պարլամենտական-սահմանադրական  
ըէժիմով փոխարինելու մէջ և դրա համար  
էլ լիբերալներ են։

Սակայն խոշոր հողատէրերից անհամե-

մատ աւելի տուժում է գիւղացիութիւնը. Նա բառիս բուն նշանակութեամբ քաղցից մեռնում է: Այս պատճառով գիւղացիութիւնը միշտ խռովւում է—բայց երբ դալիս է քաղաքական յեղափոխութեան, հին կառավարութիւնը տապալելու շրջանը, այն ժամանակ նա յեղափոխական է դառնում, աշխատում է տապալել գոյութիւն ունեցող կազմը և փոխարինել նրան նոր, իրան շահերին համապատասխանող կազմով: Բայց այդ բանին համնելու ամենամօտիկ և ամենաիրական միջոցը նա պէտք է համարէ խոշոր հողատէրերի հողերի գրաւումը:

Որքան երկար է տեսում յեղափոխութիւնը, այնքան բազմանում է այնպիսի գիւղացիների թիւը, որոնց գլխում մեխւած է այդ միտքը և այնքան մօտենում է գիւղացիների՝ խօսքից գործի անցնելու վտանգը:

Այսպիսով լիբերալների ամենաբուռն ցանկութիւնն է յեղափոխութեան դադարումը: Եւ եթէ լիբերալները այնքան պաշտպանում են Վիտտէ-Դուրնօվօյի Դուման՝ այդ միայն նրա համար չէ, որ նրանք Դուման պարլամենտական-սահմանադրական կազմ ստեղծելու մի միջոց են համարում, այլ և գլխաւորապէս այն պատճառով, որ նրանք յոյս ունեն, թէ Դուման մի միջոց կըլինի իրանց ձեռքում յեղափոխութեանը

վերջ դնելու և նրան փոխարինելու ռխաղաղ էւօլիցիայով»—մի բան, որ խոշոր հողային սեփականատէրերին ամենաճշգրիտ կերպով խոստանում է ապահովել իրանց սեփականութիւնը:

Ուսանց երկիւղը, իսկ միւսների յոյսը—թէ Դուման վերջ կըդնէ յեղափոխութիւնը, նախ քան նրա մի որեւէ էական բան ձեռք բերելը, լիովին հիմնաւոր կըլինէին այն գէպքում, եթէ Ռուսաստանում ներկայումս չտիրապետէր յեղափոխութիւնը, եթէ գոյութիւն չունենային դասակարգային վերին աստիճանի լարւած հակասութիւնները, որոնք մի անգամ բաղխւելով միմեանց, այլ ևս չեն կարող խաղաղւելը մինչև որ այս կամ այն կողմը վերջնականապէս չըպարտէի, և վերջապէս՝ եթէ Ռուսաստանի պետական և ժողովրդական տնտեսութիւնները կատարելապէս մնանկացած չլինէին։ Նրանք (պ. և ժ. տնտեսութիւններ) միայն այն ժամանակ կարող են սկսել յաջող կերպով զարգանալ, երբ դրւած կըլինեն բոլորովին նոր հիմքերի վրայ։

Յեղափոխական այս դրութիւնը շատ աւելի է թուլացնում կառավարութեանը, քան այդ կարելի էր սպասել՝ դատելով նրա գործադրած բեպրեսիաներից ու խըստութիւններից և յեղափոխական կուսակցութիւններին տալիս է մի այնպիսի ոյժ,

որը ընդունակ է ջարդ ու փշուր անել ամեն մի խոչընդուա։ Ընտրողական օրէնքը «խաղաղ էւօլիւցիայի» ժամանակ անշուշտ կառավարութեանը հնարաւորութիւն կը- տար իրան հպատակ մի ըէակցիօն պար- լամենտ ստեղծելու, այն ինչ այժմ, նու, չնայելով իր կօգակներին ու դրագուններին, ոստիկանութեանն ու խուլիգաններին կա- տարելապէս անկարող է այդ անել։ Նա իր անզօրութիւնը ոչնչով չհաստատեց այնպէս, որպէս հէնց ընտրութիւնների տւած հետե- ւանքներով։

Միւս կողմից թում է, թէ ժողովրդի մասսաները, չհաշւած Դումային բօյկու անող պրօլետարիատը, ընտրողական պայ- քարին մասնակցեցին մեծ եռանդով։

Դեկտեմբերեան ապստամբութեան անյա- ջողութիւնը այնպիսի ոչնչացնող պարտու- թիւն չէր, որպիսին էր 1848 թւի յունիսի կոփուը՝ Փարիզում։ Ապստամբութեան ճըն- շումը ոչ մի տեղ կանգնեցնող կամ ճնշող ազդեցութիւն չունեցաւ, ընդհակառակը նա արենութեք կատաղութիւն առաջ բերեց։ Սակայն այդ անյաջողութիւնը անկարելի դարձրեց ապստամբութեան շարունակելը, իսկ ընտրողական պայքարը իր ժամանա- կին վրայ հասաւ և ժողովրդի հետաքըր- քը ութիւնն ու նրա յեղափոխական էներ- գիան տեղափոխեց դէպի կուի մի ուրիշ

եղանակ, որ Ռուսաստանում աւելի չսւած ու չփորձւած էր, քան գործադուլը կամ բարրիկադային կոիւը Ռուս ժողովուրդը արթնանալով իր երկարատև քնից, ուզում է գործել, ուզում է կուել, նա բացասում է ամեն մի կրաւորականութիւն և այնպիսի մի մօմէնտում, երբ ընտրողական պայքարը աւելի է խոստանում, քան ապոտամբութիւնը—նա դիմում է կուի այդ եղանակին:

Արևմտեան, կամ կենդրոնական Եւրոպայի որևէ երկրում, որտեղ բոլոր ունեոր դասակարգերը և նոյն իսկ գիւղացիութիւնընըն ու ինտելիգենցիան ամբողջովին ըէակցիօն են և կառավարութեան կողմը կանգնած, որտեղ գոյութիւն ունի միայն մի յեղափոխական, խիստ դիմադիր դասակարգ—պրօլետարիատը և որտեղ կառավարութեան իշխանութիւնը դեռ թուլացած չէ—ռուսականի նման ընտրողական օրէնքը նորմալ, խաղաղ ժամանակ պիտի տար ամենարէակցիօն պարլամենտ, որպիսին միայն կարելի է երեակայել և պրօլետարիատը այդ դէպքում իր բոլոր ջանքերը պէտք է գործ դնէր այդ տեսակ պարլամենտը վերացնելու համար:

Ռուսաստանում յեղափոխութիւնը այնպիսի մի հսկայական ոյժ ունի, որ նա վաղուց արդէն մուտք է գործել Դուման, նոյն

իսկ այդպիսի ընտրողական օրէնքի ժամանակ. նա այնքան ուժեղ է, որ Դումայի բոյկոտը անգործադրելի համարւեց և Ռուսաստանի սօց.-ղէմօկրատիան ամեն տեսակ հիմք ունի Դումայի ձախ թևի կողմը ըռնելու, իսկ շուտով գուցէ և կանգնելու. Նրա նոյն իսկ մեծամասնութեան կողմը՝ առաջ քշելով նրան իր առաջիաղացութիւնների մէջ՝ կառավարութեան դէմ, բայց միենոյն ժամանակ օգնելով և պաշտպանելով նրան, կառավարութիւնից:

Ի հարկէ չէ կարելի սպասել, որ սուս լիբերալները կըդառնան Եակօրինեաններ. և կըսկսեն յայտարարել անդադար յիղափոխութիւն (Revolution in progress). ընդհակառակը, նրանք աւելի քան երեք կաշխատեն յեղափոխութեանը վերջ դնել, բայց այդ նրանց չի յաջողւի: Դումայում «կուլտուրայի և սեփականութեան» ներկայացուցիչների կողքին տիրապետում հն—գիւղացիները: Նրանք պահանջում են, որ հողային հարցը վճռւի իրանց ցանկացածուղղութեամբ և գիւղացիութեան պատգամաւորները մինչև իսկ ըիսկ կանեն իրանց կեանքով, եթէ մտածեն խարել իրանց ընտրողներին:

Եթէ լիբերալները ցանկանան բաւարարութիւն տալ գիւղացիների պահանջին առանց մնասելու իրանց սեփական շահերին,

այդ նրանք կարող են անել միայն պետութեան հաշով, այսինքն նրանք պէտք է կրծատին հարկերը և պետութեան հաշով գնեն խոշոր հողային սեփականութիւններն ու բաժանեն գիւղացիներին։ Բայց այդ ուղղութեամբ արւած իւրաքանչիւր մի քայլ պահանջում է պետական ծախսերի կրծատումն և աւելի խիստ կօնտրօլ պետական փինանսների վրայ, ուրեմն և տանում է դէպի ընդհարում բիւրօկրատիայի հետ։

Ոչ «կաղէաները» և ոչ էլ լիբերալները չեն կարող խուսափել յեղափոխական կօնֆլիկտից։ որքան նրանք գիւղացիների հետ կօնֆլիկտի մէջ մտնելուց խուսափելու ջերմ ցանկութիւն ունենան, այնքան եռանդով պէտք է դուրս գան կառավարութեան դէմ։ Խակ եթէ նրանք հպատակւն կառավարութեանը—դրանով կըզինեն իրանց դէմ գիւղացիներին։

Բացի դրանից պէտք է հաշւի առնել պետական գանձարանի կատարելապէս քայքայւած վիճակը, սոսկալի տնտեսական ճգնաժամը, սարսափեցնող գործազրկութիւնը և բաղցած, բայց կուի ծարաւի պրօխտարիատը։

Յեղափոխական այս դրութեամբ ստեղծած բոլոր այդ հարցերը լուծել—Դուման անկարող է, բայց նրանցից ամեն մէկը հրամայողաբար պահանջում է իր լուծումը։

Եւ այդ ուղղութեամբ իւրաքանչիւր մի փորձ, ինչ էլ նա լինի, պէտք է շօշափէ խոշոր ինտերէմներ, պէտք է գրգռէ, շարժողութեան բերէ ժողովրդի լայն մասսաներին, իսկ իւրաքանչիւր փոքր ի շատէ բացիօնէլ փորձ՝ այդ հարցերը լուծելու, պէտք է սահմանափակէ բիւրօկրատիայի ամենակարողութիւնը։ Եւ Դուման որքան քիչ հնարաւորութիւն ունենայ որևէ շօշափելի բան անելու, այնքան մեծ պահանջ կըզգայ իրան ընտրողների առաջ դրա մեղքը գցելու կառավարութեան վրայ։

Այսպէս ուրեմն, այժմեան Դուման ոչ մի դէպքում չի կարող լինել յեղափոխութեան վերջաւորութիւնը և խաղաղ էւօլիւցիայի շրջանի սկիզբը. ընդհակառակառակը, նա ստիպւած է աւելի բելիեֆ դարձնել գոյութիւն ունեցող հակասութիւնները, որոնց վերջ դնելու և յաղթելու նա անզօր է, նա ստիպւած է աւելի մեծացնել յեղափոխական գիտակցութիւնը, աւելի ուժեղացնել հակասութիւններն ու նրանց բաղխումը միմեանց հետ, մինչև որ յեղափոխական դասակարգերը չստանան իրանց պահանջների մինիմումը՝ գիւղացիները—խոշոր հողային սեփականութեան կոնֆիսկացիան, բանւորները—որպէս հիմք իրանց տնտեսական ու քաղաքական կազմակերպութեան և ոյժերի գարգացման ընդհանուր, գաղտնի, հաւա-

սար և ուղղակի ընտրողական իրաւունքը, միութիւնների, ժողովների և մամուլի ազատութիւնը և բանւորական բաւարար օրէնսդրութիւն, իսկ ամենից առաջ 8 ժամեայ բանւորական օր, և մինչև որ Ռուսաստանի ժողովրդական և պետական ամբողջ տընտեսութիւնները չմտնեն նոր շրջանի մէջ, դրւած չլինեն այնպիսի հիմքերի վրայ, որ հնարաւոր լինի նրանց յետագայ յաջող զարգացումը:

Եւ այդ հնարաւոր է միայն պետութեան մնանկութեան պայմանով, այսինքն դադարելով արտասահմանի կապիտալիստներին տոկոսներ վճարելուց, արձակելով և կամ կրծատելով մշտական գորքը և մեծ չափերով կօնֆիսկացիա անելով։ Փաստերի տրամաբանութիւնը Դումային կմղէ դէպի առաջ ու առաջ, այսինքն, ուրիշ խօսքով, գիւղացիութիւնն ու պրօլետարիատը Դումայի անդամներին աւելի եռանդով կըստիպեն թեքւել դէպի ձախ, աւելի կուժեղացնեն իրանց հակառակորդներին, մինչև իրանց վերջնական լաղթութիւնը։

Այժմեանից որոշել այդ կուի ձևերը, կը նշանակէր իզուր գլուխ ցաւացնել։ Ո՞վ կարող է այժմ հաստատապէս պատասխանել այն հարցերին, թէ այդ կուի կը տանէ արդեօք նորից դէպի մասսայական գործադուլ, կամ նոյնիսկ դէպի զինւած ապստամ-

լութիւնը, թէ նա ուղղւած կը լինի ՚իումայի պաշտպանութեանը՝ կառավարութեան դէմ և կամ կը ճգտէ ոյժ տալ միայն նրա ձախ թերին. կը ստեղծւեմն արդեօք նոր, դեռ չեղած դրութիւններ և երեան զկամն արդեօք կուի նոր եղանակներ:

Հաստատապէս միայն մի բան կարելի է ասել, յեղափոխութիւնը մտնում է այժմ նոր, աւելի վտանգաւոր շրջանի մէջ: Մինչև այժմ կառավարութեան ամենախշոր առաւելութիւնը կայանում էր նրա կենդրոնացման մէջ, որը նա հակադրում էր միմեանց հետ հազիւհազ կապւած տեղական ապստամբութիւններին ու մասսայական գործադուլներին: Այժմ Դումայի շնորհիւ յեղափոխութիւնը կենդրոն է ստանում: Ինչ ուղղութեամբ էլ գնալու լինի, այն միջական թէ անմիջական, դիտաւորեալ թէ ոչ դիտաւորեալ խթանները, որ նա սրանից յետոյ կտայ յեղափոխութեանը, միաժամանակ կներգործեն ամբողջ Ռուսաստանի վրայ և ամեն տեղ միաժամանակ առաջ կը բերեն հակագործողութիւն:

Տեղական բաժան-բաժան, ապակենդրոնացած անկարգութիւնների ու խռովութիւնների շրջանը Ռուսաստանում անցաւ: Սկսում է կենդրոնացած յեղափոխութիւնը, որը աւելի անյաղի կը լինի: քանի հակագործութեան նշանաւոր շարժումը:

Մայթ  
Հ/Ճ